

Ոսելով խարդախութեան համար պատժելի խանութպաններու մասին, ուղեգիրը կ'ըսէ .

«Հայերը եւ հրեաները աւելի պատուաւոր համարուած են, զոնէ ես երբեք չտեսայ (հայեր եւ հրեաներ) այսպէս Փաւլախայով պատժուած առեւտրական խարդախութեանց համար» 15) : Կը յիշէ նաեւ, որ Թուրքիոյ մէջ քիչ թիւով յոյն եւ աւելի քիչ թիւով հայ մուրացիկաններ կան՝ ասոր պատճառ նկատելով ուտեստեղէնի աժանութիւնը : «Գրիւ մը ցորենը Կ. Պոլիս (1699-ին) մէկ ասբեր (հայոց սպիտակ կոշած դրամը, 120-ը մէկ դուրուշ) չէր արժեք, բրինձը հազիւ 150, ոչխարի միսին օխան 12, կոփունը՝ 6, իւղը՝ 20, խաղողը՝ 2, խոշոր ձմերուկը 4, եւ մնացեալ ուտեստներն ալ համեմատաբար : Բոլոր ասոնք, բացի ցորենէն եւ բրինձէն, կէսով աւելի աժան են քաղաքէն դուրս, մասնաւորաբար գինին, որ քաղաքին մէջ 12 կ'արժէ, այլուր կը գնուի 5-ի, նոյնիսկ Թէնետոսի Մուսաղլի կոչուած լաւագոյն գինին : Ֆրանկներունը այդքան ալ չ'արժեք. անոնք ազատութիւն ունին իրենց բոլոր ուտեստը ներածելու առանց որեւէ մաքսի. անոնց անուան հովանաւորութեամբ յոյները եւ Սուլթանին ուրիշ հրպատակները գինին դուրսէն քաղաք կը ներմուծեն : Այսինքն՝ ղեսպանները ֆերման ունին Բարձրագոյն Դռնէն ներմուծել այնքան այն սննդեղէններէն, որոնք մահմետական օրէնքներով արգելուած են, օրինակ՝ գինի, խոզ եւն., որքան որ կը ցանկան, նոյնիսկ իրենց եւ պատկան ազգութեանց կարիքէն աւելի : Եւ յոյները, հայերը ու հրեաները, որոնք այդ առանձնաչորհումները չեն վայելեր, ընդհանրապէս այս ֆէրմանները բանակցութեամբ կը գնեն քարտուղարներէն, մինչ քարտուղարներուն տրուած են իրենց տէրերէն այդպէս ձեռքէ հանելու համար : Անոնց համար կը տրուի քանի մը հարիւր

տուրադ, նոյն ատեն ղեսպանին կը հայթայթեն գինին ձրի, իսկ վաճառողներուն օխան 6 ասբերէն, միշտ այն պայմանով որ Նորին Բարձրութիւնները (ղեսպանները) իրենց պաշտպան կանդնին աւելորդ (գինի) ծախած ատենին, քանի որ Ֆրանկներուն կարիքէն աւելի կը ներմուծեն եւ ծախելու համար այն գինին, որ իրենց տուններուն մէջ իրենց իսկ որթատունկերէն կ'արտադրեն, կամ խաղողէն, զոր կը գնեն Թուրքիոյ մէջ : Ուրէ մէկը ուզածին չափ կարող է խաղող գրնել, զոր իր տանը (գինի) կը ճզմէ : Սակայն, թուրքերը, որոնք նոյնպէս կրնան խաղող ծախել կամ ուտել, գինի չեն կրնար շինել կամ խմել, եւ ոչ ալ յոյները, հայերը կամ հրեաները կրնան գինի վաճառել Կ. Պոլսոյ մէջ, բացի ղեսպանին պաշտպանութեան տակ : Եւ, որովհետեւ այդ պաշտպանութիւնը (ղեսպաններուն) նուէրներ կ'արժէ, այդ իսկ պատճառով գինին հոն (Կ. Պոլսոյ) մէջ կրկին գնով կը ծախուի» :

Ուղեգիրը կը վկայէ, որ հակառակ որ գինի խմելը թուրքերուն արգելուած է, անոնք քրիստոնեաներէն շատ աւելի կը խմեն, որմէ նիւթական մեծ շահ կը ստանան յոյն, հայ եւ հրեայ գինեպանները : Թուրք վաճառողներն եւ խմողները ենթակայ են «Փաւլախան»ի : Սակայն, ի դուր, քանի որ օրէնքը գործադրողներն իսկ անյազ խմողներ են 16) :

«Հոկտեմբերի վերջերը (1700) երեք հայ վարդապետներ՝ Եփրեմ, Սարգիս եւ Սուպահի մրցակիցներ էին Կ. Պոլսոյ պատրիարքութեան, — պատիւ մը, որ առաջին երկուքը քանի մը տարի առաջ արդէն վայելած էին : Վերջինը քահանաներու մեծամասնութեամբ ընտրուած էր, եւ Բարձրագոյն Դռնէն ատոր համար պէրաք ստացաւ, որուն վրայ նախկին երկու պատրիարքները եւ իրենց կուսակիցները, կրօնական պատերազմ յայտարարեցին իրեն (Սուպահիի) եւ գինքը ընտրող-

15) Անդ՝ էջ 189 :

16) Անդ՝ էջ 192-3 :